Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

666

14.
35005

Հոտ

Սարգսյանի

Սատերբերդի

Սիրուսը

Ս. Գարեգինը

Եկեղեցին:

Սիրուս, 26. Մարս 1981

Գրիգորյան Գրա

ՀՕՊ. Գ. Սիրուսեանի մէջ
գտուած հոտեկոյր ոչի գլ-
խոյր, հարուստ զարդանախշ
է Յովհաննէս Յարութիւնեան
ազգական գրարարներու:

ՀԱՅԵՐԷՆ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԵՐԶՆԿԱՑԻՈՅ

ՕՄԱՐՊՈՒՔ ԵՊԿԵԼԻՅ

ԱՌ

ԱՊԼՈՅ ԻՇԽԱՆ

Հրատարակ

Ի ԿԱԼԿԱԹԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1846

ԱՐՁԱՆ

ՅԱՒԷՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ

ՄԵԾԱՆՈՒՆ ԱԶԳԱՍԻՐԻ

ԳԷՈՐԳԱՑ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՍՊԵՏԻ

ՈՐ ԿՏԱԿԵԱՑ ՄԵԾԱԳՈՒՄԱՐ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՍ

'Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՄԱԴՐԱՍԱՑ
ՀԱՅՈՑ ԴՊՐԱՏԱՆ,

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ,

ԱԹՈՌՈՑ, ՎԱՆՈՐԷԻՑ,
ԵՒ ԵԿԵՂԵՑԵԱՑ·

ԱԶԳԱՅԻՆ ԶԳԱՑՄԱՄԲ

ՅԱՐՈՒՅԱՆԷ ԶԱՅՍ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ։

ՑԱՂԱԳՍ ՈՐ Ի ՍՄԱ ԵՂԵԱԼ ԲԱՆԻՑՆ

ԿԱՆԽԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Զօրութիւն Պարանաւոր Բանիցս, նախ ղարբերացս դրութիւն և գիրգ ցուցանէ. և ապա՝ զի ՚ի շարժման է և ՚ի շրջագայս-ութենէ երկնի ծնանին ժամանակ, և կենդանիք, և բուսակաւք՝ որք ՚ի ժամանակի. զոր իմաստասէր սահման է-դին բնութեան՝ այս է Արարածոցին արութիւնն. և սայնի զբնութիւն ծը-նութիւք շարժման և կայանի. այսք՝ շարժ-ման երկնի, և կայակնութեան երկրի։

Եւ ապա թէ ո՞րպէս Արարածոցն արութիւնն է դրութիւն ղարբերացս ի-մաստասիրէ, զոր օրինակօքդ ցուցա-նէ։ Եւ թէ՝ զի՞ւղ կայ հաստատուն երկիր, և ո՞րպէս ՚ի մէջ կայ երկնի։

Ասացին՝ և զհրեշտակն երկնի՝ և զհաստա-
տութիւնդ զանաչանութիւն, թէ ո՞րպէս
զանաչանին բնութիւնքն. և զմոլորա-
կացդ՝ և զանմոլորն ասպիսոյց զկացմանն։
Եւ թէ զաշխարհս՝ ի վերոյ երկոպատան
կենդանակերպէցն ո՞րպէս են բաժանեալ։
Եւ թէ մոլորս ասպիսոյն՝ ի կենդանա-
կերպն՝ ո՞րպէս են զանաչանեալ բնու-
թիւնքն և գործովք. և զինչ՞ նշանակու-
թիւնս ունին։ Եւ ապա՝ ի ներսէին գօ-
սիդ սկսեալ՝ որ է լուսին. և զէօրն
գօսիսն ասէ և զասպիսին որ՝ ի նմա,
և զբնութիւնսնոցունց. կամ զինչ՞ գործ
և ապրանքնշանացն՝ որ՝ ի նոցանէ լինի.
և զինչ՞ օգտիմ՝ ի նշանացն՝ զոր յապա-
գըս մերոց օգտի եղ՝ ի նոսա Աստուծոյ։
Իսկ յաւելագունէդ՝ ասացին զէոխուսն է-
զանակացդ, և զբնութեանցս լուսաւորացդ.
և թէ դանի՞ բաժանի աշխարհս, յոր պիտն
և գիշերն՝ ամսոյն և նուազելովն

ֆոֆոխին։ Եւ ըստ չէ վասրապարս գիւ-
ղ ի հանուրդին իմաստասիրացն։ Եւ ըստ
ՅԱսպուրաց է եղեալ 'ի քնարանն սա-
պէղացն՝ որ վասն մեր օգտի, նշանք ի
գուշակմանէ երևին 'ի նոսա. ի պայտ
օրինակս սպուգեալ են. որ չէ պար-
մանք՝ ըստ յասպէղան Ասպուրաց պարս-
ին է եղեալ։ Եւ ըստ վասն է՞ր պա-
սուան ուրբ նախապէ ոչ, պար չէ պարպ
առնել. ի ըստ առնէ՝ ինչ է պարճառ։
Եւ պարճառ այնմ ըստ է՞ր խոպէլի սա-
պէղացն բան։

Եւ ապա՝ ներբողական գովքսպ երկնի
ըստ ո՞ր տան լուսաւորչի յիմաստասիրին
վարժէ պրէպ, պար Բնական Օրէնք ասէմ։
Եւ ապա այլաբանութիւնքն ի արդա-
կանաբար՝ պլատոնին ի պարբերական գործ
ի պիրս, խորապ քնարանն մարդկան։
Եւ ըստ լուսինն օրինակ էր հնոց օրինացն,
ի արբերական Աբերարանին, ի ասպէղան

հարգարէին։ Եւ ապա զգալի արէգա-
ին՝ յօրինակ աւետեալ Քրիստոսի՝ իմանալի
Արեգական Արդարութեան, և զինչ-
նէն 'ի Հայրական ծոցոյ, և զԲանին
հարցն լինելն, և 'ի Կուսական ծնն-
դենէն զանօրինակն Երգոցդ-ութիւնն՝
մինչ 'ի մեռս անգամ գալուստն, հաստա-
տօրէալ եմք ուղիղ դաւանութեամբ, և
անդ աւարտեալ։

Այս կարճատօր զօրութիւն՝ որ 'ի սմա.
և որ աշխարհարարէր մեր դնէն՝ յա-
լուվ գարնէն զօրութիւն 'ի սակաւ բա-
նիցս, էր պարճառս պալով իմաստ-
նոց։ Այլ այս սակաւ ծանօթութիւն,
և պօրիւ-ի ձերով յանցանաց մերոց
ներեցուք։

Ի ՎԵՐԱՑ

ԵՐԿՆԱՑԻՆ ԶԱՐԴՈՒՑ

Ի Յովհաննէսէ Վարդապետէ Երզնկեցւոյ ի քաղաքս Ռ-ստ-ճաստէր և էրբէպաշտ իշխանին Հայոց Ապլոցի, բան ինչ ի տիշապոկոիրոյ Էնագրէցոյ։ Յապագա երկնի և վարդոյ նորա։

Յամենաւրեալ՝ զործս Աբարչին՝
որ զոյացան,
Մեծ և ահեղ՝ սքանչելիք՝
ներզործեցան։

Ոմանք 'ի տես զարմանալեաց՝
յօրինեցան ,
Եւ այլք 'ի պէտս վայելչութեան՝
մարգկան տուան ։
Հանրական՝ արարածոց՝
մատուանք լման ,
Եւ 'ի յերկեակ՝ թիւ բաժանեալ՝
որոշեցան ։
Աշխարհ՝ սկիզբն՝ և հ՝մուանք՝
հաստատեցան ,
'Ի յերկոս՝ յանկիւնքս գիծ՝
առկայացան .
Նախ երկնային՝ բոլորակին,
որ * կացուցան ,
Մերձ առ նմին՝ հաստատութիւնք՝
երկրի եդան ,
'Ի Մովսէս՝ մարգարէից՝
ընդ նախնական ,

* 'Ի տպագրեալն " Բան՝ Ճոռեցան "

Այսպէսի՝ առ ձայնելով՝
անուանեցան ։
Սոքա չորից տարերց՝ մասունք՝
ըստ գրեանական ,
Յորմէ մարմինք՝ տարբրականաց՝
հաստատեցան.
Ի չոր և ցուրտ՝ բնութիւն հողոյ,
որ ստորացան
Ցրտին և գէջ՝ բնութեան ջրոյ՝
որք խառնեցան ,
Բաղկացութիւնք՝ երկրի կայից՝
կատարեցան ,
Որ միշտ անշարժ՝ կայիւք շարժի՝
եղեղական ։
Այլ և գիջին՝ բնութիւն օդոյ՝
և ջերմական ,
Որք ընդ հրոյ՝ ջերմին և չոր՝
վերամբարձման .
Նմանապէս՝ կամարն երկնից՝
խորան ձգեցան ,

Որք մշտաշարժ՝ բերմամբ շրջին՝
անյեղական ։
Յոր իմաստուն՝ ներհմտութեամբ՝
յայս վարժեցան,
Եւ եղական՝ բնութեան գոյից՝
եդին սահման .
Ասել զբնութիւն՝ ծնուն դ շարժման
որք կայանան,
Որք ի շարժուն՝ և յանշարժից՝
տարերց ծնան .
Ղեկոյք թեւոց՝ կրկին բնութեան՝
միշտ ընթանան ,
Որք ի ծովու՝ այս աշխարհիս՝
†կան ի ծփման ։
Արդ շարժելով՝ բոլորն երկնի՝
անշնչական ,
Մի՛շտ պնդելով՝ գկայանս երկրի՝
անշաստական ։

† 'Ի պոպոգրեալն " Հոն ծփոյն "

Գեղեցկապէս՝ մեալով սմին՝
հաստատական,
Ոչ ցրուելով՝ սորին բնութեան՝
բաա տարբական.
Այնպէս անշարժ՝ բնութիւն երկրի
որ գոյացան,
Ինքեամբ պրկեալ՝ պարարերբ՝
գերկնի շրջան.
Երկնքումբք՝ բնական կրիւք
անլուծական,
Ի՝մեանց լինին՝ նիւթ և պատճառ՝
|| յարամնական։
Որպէից՝ տարերց մասունք՝
որ խառնեցան,
Անքակտելի՝ սերով ի նոյն՝
յարմարեցան.
Կատարեցան՝ զարդ աշխարհիս՝
որք հացան,

|| Ի պոպոգրեալն “ յորմարոյն։ ”

Ցանմահ բանէն՝ արարչական,
որով ստեղծան.
Նոյն Արարիչն՝ հրաշագործեաց՝
զարմանազան։
Ոչ թէ բանիւ՝ միայն արար՝
անքննական.
Ի սմին արուեստ՝ ըս հանճարոց՝
իմաստական,
Եդ ի բնութիւն՝ արարածոց-
ըս դասական։
Ի ստորին կոյս՝ կայացեալ՝
հողածանրական,
Մերձ առ նմին՝ շարադասեալ՝
ջուր գիճական.
Խորանաձև՝ կամարացեալ՝
յօդ վերնական,
Զբոլորն բնաւ՝ շրջապատեալ՝
հուր կիզական.
Նման սմին՝ քեզ յարացոյց-
ըս ցուցական,

Յանօթ արկեալ՝ աւազ և ջուր՝
իւղ նիւթական .
Դիր ամանոյն՝ և նիւթ իւղոյն՝
առ վերոյ կան ,
Ներքնոյն աւազ՝ և զկնի ջուր՝
† զետեղանան ։
Որպէսց՝ բոլոր մասանց՝
պարագրական ,
Օդ ընդ հրոյ՝ հողմոյ հնչմամբ՝
վերամբարձան .
Որով երկիրս՝ այս գնտաձև՝
առկայացան ,
'Ի միջոցի՝ աստ ճեալով՝
անշարժական ։
'Ի սոյն և այլ՝ քեզ օրինակ՝
համանման ,
Զձառ հաւի՝ առ գաղափար՝
ըս տեսական ։

† 'Ի պապգրէսն " ղէպէղանն ։ "

Շրջապատեալ՝ կեղեւն կարծր՝
և նիւթական,
Որպէս արփւոյն՝ հրեղէն կամար՝
պարաձգեցան.
Յորան երկրորդ՝ զկնիք սորին՝
օդոյ նման,
Որ մինաձև՝ ընդ խեռեփուն՝
իւր կառուցան.
Այլ և երրորդն է՝ սպիտակուցն՝
ջրոյն նման,
Եւ դեղնագոյն՝ առ միջոցաւ-
ն զնդական.
Նոյնպէս երկիրս առ միջոցի
յարամնական,
Անսիւն ներքուստ՝ և 'ի վերուստ՝
անկախագան։
'Ի՛ ներքուստ՝ հողմոյ հնչմունք՝
ընդիմանան,
Եւ բնական՝ իւր ծանրութեամբ՝
ոչ ամբառնան։

Հաւասար՝ վեցակուսի՝
են զատական ,
Զառ ի վեր՝ և ի ներքուստ՝
և կողմնական.
Արդ ի յերկրորդ՝ աւուր ըն մեծ՝
արարչութեան ,
Յորում Հրաման՝ ել Արարչէն՝
հաստատութեան .
Յոգոյ հնչմամբ՝ ջուրք ի ջրոյ՝
բաժանեցան ,
Եւ հրեղէն՝ արփւոյն կիզող՝
դիմակ արկան .
Որպէս զի մեզ՝ աշխարհ լուցցէ՝
տոչորական ,
Սաստիկ Հրատն՝ բոցազոյն՝
և կիզական .
Յուրտ բնութեամբն՝ իւր ջուր լինի՝
կերակրական ,
Զի մի աշխարհ՝ սպառեսցի ի՝
հրոյն լուցման ,

Այսոքիկ՝ երկիր միմեանց՝
են յաւակական ,
Արագ արագ՝ շարժմամբ շրջին՝
անլռական ։
Պարառեալ՝ շրջապատեն զուն-
դըն երկրական ,
Եւ ի միմեանց՝ են հեռագոյն՝
նոյն չափական ։
Լայնու թեամբ՝ չորեքկուսի՝
եզերական ,
Եւ խորու թեամբ՝ ընդ բարձրու-
թեանն զուգական ։
Ունիս սոքօք՝ իմաստու թիւն՝
քեզ բաւական ,
Որով պատմես՝ զփառս Աստուծոյ՝
անճառական ։
Ցնծալ հոգւով՝ ի յարարածս՝
այս եղական,
Գովել զանեղն՝ ի յեղելոց՝
անմահական ։

Աբդ մինչև՝ ցայս վայր խոսեցեալ՝
բան նախնական,
Յաղագս՝ երկուց կիսագնդեցն՝
եռայարկեան։
Նիւթ ցանկալի՝ ուսումնասէր՝
մտաց մարդկան,
Որով կրթին՝ վարժմամբ բանիս՝
տեսողական։
Ուս ի շարժմանց՝ զարդուն երկնից՝
տեղեկանան,
† Եւ յորիծէն՝ ոպոգոյէն՝
ըղգուշանան։
Հի-սէալ պոսկ՝ Բանէն կորգի՝
յորմորոկան,
'Ի զարդ զլխոյ՝ Բանասէրիդ՝
յոյժ ըղձական։
Նոյն և 'ի նշանան՝ անլուծ սիրոյ՝
եղբայրական,

†'Ի ՅԷՈՍԳԻՆ ՊՈԿՈՒՆ ՆՕՐՈՍԳԷՐԻՆ

Եւ մեզ յանձնիւրս՝ ժամանակաց՝
պատճառ յիշման ։
Այն որ յառաջ՝ քեզ ճառեցան՝
բանք նախնական ,
Յաղագս երկուց՝ տրամագծիցն՝
անկիւնական ։
Եւ տարերացն՝ դասակարգի՝
միջնորդական.
Եւ արուեստից՝ խառնուածոցն՝
յարմարական ։
Այլ վերատին՝ դառնամ՝ի նոյն՝
բան ըղձական ,
Եւ սկսանիմ՝ յաղագս երկնի՝
ըստ հետևման.
Եթէ ոչ ունիցեմ՝ յոյս ցերանորդիւ՝
չեմ էութեան ։
Զ՝ոգին Աստուծոյ՝ վերակարդամ՝
ոչ օգնական ։
Նախ զառաջին՝ երկինն ասեմ ,
զվերնական ,

Եւ համառօտ իսկ անցանեմ՝
անքննական։
Զոր և եթեր զսա կարդային՝
ազգն Յունական,
Եւ հուր || թողեալ այնք որ լիզուաւ
Քաղդէական։
Իսկ է Հրան այն բոցազոյն
և պարզական,
Մարմին աննիւթ և անչարչար,
անհատական.
Ոչ հյուսմանք, ոչ ոք ի նմա,
այլ զատական,
Զի հինգերորդ է ի չորիցս
առանձնական։
Վարագոյր Աստուածութեան
անճառական,
Զգեալ ընդդէմ լուսեղինացն
անմարմնական.

|| Ի տպագրէալն „Բուդէալ"

Զբոլորս բնաւ շրջապատեալ
զօրէն ձեղուան ,
Արագապէս առեալ շրջան
անտեսական.
Արդ զսորայս՝ կամիմ թողուլ՝
ասել ըզբան ,
Եւ զերկրորդէս՝ սկսայց ճառել
յօժարական .
Սա կոչեցաւ երկին երկրորդ
հաստատական ,
Որ 'ի ջրոյ և 'ի յօդոյ
անուանեցան ։
Ոչ պաղեալ՝ ոչ թանձրացեալ,
այլ լուծական ,
Որպէս ըզջուրս , որ առ մեզ են
հոսհոսական .
Իսկ 'ի յօդոյ փչմամբ եղեալ՝
որպէս խորան ,
Գմբեթաձև կամարացեալ՝
նման ձեղուան .

Նոյնպէս և հոգմն օգ սիռեալ
տարածական,
Որպէս յանօթ ինչ՝ ժողովեալ
'ի նիւթական.
Զձև առեալ վերինն երկնի
միշտ շրջական,
Լուսաւորացդ եղեալ սա տուն
և կայարան.
Որում վկայեն գիրք գործոցն
արարչական,
Թէ եդ զնոսա 'ի յերկնային
հաստատութեան.
Բայց որոշման սոցա տեղիք՝
են զանազան,
Զոր մոլորակ աստեղքն ունին
ընթացական.
Նօթնաստեղեան՝ անուանեցան
սուքա խաբան՝,
Յոմանց զօտիք՝ և պարունակք
պարբերական։

Մի քան գմի են գերագանց
վերագրական ,
Եւ ութերորդն՝ զուանգ անմոլոր և
բարձրական.
Յոր կերպարանք են կենդանեաց
երկոտասան,
Որով ք բոլոր կամարն երկնից յայս
չափեցան ։
Նոյն և երկրիս հաստատութեան
տեղի կալան,
Յոր ըստ բնականն զօրութեան՝
ազգեն նշան .
Զի և աշխարհ՝ կերպարանօք
մարդոյ ցուցան .
Եւ երկնային բոլորակին
վերճակեցան ։
Նոյն է գլուխ , որ է աշխարհն
Պարսկական ,
Ցուլ՝ պարանոցն՝ որ են կողմանք
Բաբելական.

Եկաւորին ձեռքն են և ուսքն
Գամբական,
Առիւծն՝ ոտինն իսկ և կոտիցն
Ասիական,
Կոյսն՝ ներքին որովայնին
Եւրոպական.
Կշեռն՝ որ է կշռոցն երկուց
Լիբիական,
Իսկ և կարիճն՝ է անդամոցն, ազդ
Կրետական.
Աղեղնաւոր՝ բարձքն և երիք
Իտալական,
Եւ Այծեղջիւր՝ ծունկք երկոքին
Ասորեստան.
Ջրհոսն՝ սրունքն, է աշխարհին
Եգիպտական,
Եւ Ձուկն՝ թաթք ոտիցն երկուց, է
Հնդկաստան.
Եւ Խեցգետին՝ լանջք՝ կոչեցեալ,
են Հայաստան։

ԳՐԱԴԱՐԱՆ

Եւ աստիճանքն՝ որ ի նոսա
երեսնական ,
Աւուրց ամսոյն՝ են զուգաթիւ
և համարան .
Իսկ բովանդակ կամարն երկնից
համարական ,
Երեք հարիւր վաթսուն թուով
են աստիճան .
Սրովք ըստ նոյն թիւ համարոյ
աւուրք ծնան ,
Յերկոտասան ամիսք տարւոյն՝
որ գոյանան .
Թողում ըզհինգ թիւ աւելացն
անքննական ,
Զի խոր ունի այն՝ տեսութիւնըս
մասնական ։
Դարձայց ի նոյն կերպ կենդանեացն
երկոտասան,
Եւ զբնութեանցն ճառեցից՝
նոցա սահման .

Խոյն և Առիւծն և Աղեղնաւորն
են ջերմական,
Ցոր և Հրային բնութեամբն իւրեանց
այրեցական։
Ցուլն և Կոյսն՝ և Այծեղջիւրն՝
են ըղձական,
Հով են և չոր և երկրային
ցամաքական.
Եկաւորն Կշիռ և Ջրհոսն՝
են հողմական,
Երկոտասան կենդանակերպքս
որ կոչեցան,
Ըստ համարոյ ամսոց տարւոյն
հանգուն նական։
Ջերմ և կակուղ՝ են բնաւորեալ՝
դալարական։
Խեց դեռենն՝ Կարիճն և Ձուկն՝
են ցրտական,
Գէշ և ջրային են զօրութեամբ՝
և զովական։

Սոքա չորից՝ տարերց բնութեանցն
զուգեցան։
Ի յԱրարչէն՝ իմաստութեամբ
կըշռեցան։
Աստեղք մոլորք՝ որք ընդ նոսա
միշտ ընթանան,
Ունակացեալ բնութեանց նոցին
դադրումն տան,
Սոքա նման՝ են շինուածոց՝
որպէս ըզտան,
Որք և անշարժ կան ի տեղւոջն
յաւիտեան։
Աստեղք նման՝ ուղղորդաց՝
են անցական,
Որք ի նոսա իջևանին
և ընթանան։
Յորժամ ի նոյն բնութիւն միմեանց
հանդիպանան,
Ածմունք բարեաց և քաղցրութեան
տան մեզ նշան։

Իսկ ի նոցուն հակառակացն
պատահման ,
Ցուրան ընդ ջերմոյ , չորն ընդ գիծի
խոնաւական,
Ցաւք և հարուածք ի յաշխարհի՝
են ցուցական .
Ըստ հակառակ բնութեանց նոցուն՝
որ վիճական ։
Թողից ճառել՝ զերկար ասցին
զազգմանց ըզբան .
Զոմանց անշարժ ասել նոցա ,
կամ շարժական ։
Կամ զոր ի մարդն ասեն նըշան , և
կերպարան ,
Թէ ի նոցուն՝ կերպ կենդանեացն
ձև անան ։
Դարձայց ի թիւ մոլորակացն
ի յեօթնական .
Որք տանուտեարք՝ եօթանց դարուց
անուանեցան ։

Այլ և ըստ աւուրցն շաբաթու՝
համարեցան ։
Եւ ըստ պահու ժամուց աւուրց
բաժանեցան ։
Նախ ի ներքին գօտին սկսայց
խոնարհական ։
Որ և երկինք լուսնին ասի ,
և կայարան ։
Սա Սիլենոս՝ անուն կոչի ,
ըստ Յունական ։
Այլ և Ղամար՝ նա անուանի
ըստ ՑաՃկական ։
Իսկ մեք՝ Լուսին ասեմք սմա ,
ըստ Հայկական ։
Վասն զի՝ լոյս ունի նա յինքն ,
իւր սեփհական ։
Են աստիՃանք գնացից նորա՝
յոյժ ներքական ։
Զի նա տեղեաւ մերձ է յերկիրս
և մօտական ։

Ուստի յաւուրս երկուս և կէս
'ի յընթացման .
Զկենդանակերպըն կատարէ ,
և զաստիճան ։
'Ի քսան և եօթըն թիւ աւուրցըն
կատարման .
'Դարձեալ 'ի նոյն գայ վերատին՝
տեղ ծննդեան ։
'Ի քսան և ինն օր և կիսոյն՝
աւարտական .
'Դարձեալ նորէ զիւր հնութիւնըն
մանկական ։
Բայց զսմանէ՝ ոմանք ասեն՝
աւք զիտնական .
Թէ ոչ ունի լոյս յինքեանէ՝
իւր ըստական ։
Այլ հայելի՝ ընդդէմ կացեալ
արեգական .
Եւ 'ի նմանէ Ճառագայթէ
զլոյսն իւրական ։

Այլ մեք ասեմք՝ ըստ սուրբ զրոց
ճշմարտական ,
Թէ լոյս լուսին՝ է յինքենէ
արարչական ։
Զի թէ ճճի մի փոքրագոյն
և սողնական .
Ունի լուսիկ՝ տպաւորեալ
'ի յիւր տրտան ։
Որովհետիս խակ ընթեռնուն՝
'ի ժամ մըթան .
'Ի կարգ զրոյն՝ զնա տանելով
'ի տողական ։
Ապա ուշ է զարմանք ասել
զայս մեզ ըզրան .
Եթէ ըզլոյս՝ լուսինն ունի
ըզբընական ։
Իսկ որ նշան և զիծ 'ի նմա
է զրոշմական ,
Այն շուք երկրիս է և ծովու ,
որք կերպանան ։

Զի հայելի է աշխարհիս՝
նա ցուցական .
Նա և երկրի չափ մեծութեամբն՝
ասեն ըզբան ։
Թէ օրինակ՝ այսմ խնդրես
հաւանական .
Ի քաղաքաց բազմաց ուսիր
տիեզերական ։
Զի յամենայն քաղաք՝ փողոց.ք
են յոգնական .
Եւ միապէս զնա տեսանեն՝
դէմ յանդիման ։
Ի ժամանակս աւուրց տարեաց
է մեզ նըշան .
Եւ որ.ք օդոց փոփոխութեանց
տեղեկանան ։
Պատարագք և աղօթիւ.ք՝
առ Տէր կարդան .
Ի ընդմանէ չար պատահմանց
զգուշանան ։

Եւ որք 'ի ծով՝ նաւել կամին
վաճառական.
'Ի նոյն տեղւոջ նաւ հանգստին
զետեղանան։
Որք ճանապարհ հեռի ունին։
կամ լեռնական.
Անդէն 'ի տան զգուշացին
անվնասական,
Եւ այս նշան՝ սեռն սիրոյ
Արարչական.
Զի ընդունայն՝ մի կորիցեն
որդիք մարդկան։
Այլ յանբանս իսկ տեսանի՝
նշան ածման.
Եւ տնկական ընութեանց՝ լինել
այլայլական։
Զի 'ի յածման նորին՝ ածեն
և լիանան.
Եւ 'ի մաշելն լուծանին
և թուլանան։

Զնոյն և 'ի Ջուրս տեսանես
առ Ծովական ։
Որք լիանան և թերանան
նըմին նըման ։
Բայց զարմանամ ես՝ ընդ լուսնին
եղեալ սահման ։
Որ միշտ աճմամբ և հնութեամբ
փոփոխական ։
Զի օդական նիւթ ամանոյ
է երկրերան ։
Որպէս պատեանք գաղտակուրի՝
ըզկարծրական ։
Յորժամ երթայ լուսինն մերձ
արեգական ,
Նուազութիւն՝ լինի լուսնոյն՝
ունակական ։
Զի զբոլորակ լուսնոյն՝ ունի
վերոյ կողման ։
Եւ այն՝ ընդդէմ արեգականն
'ի հայեցման ։

Իսկ զատանել՝ նըմին 'ի բաց
հեռացական .
Յայնժամ լինու՝ լոյսըն լուսին՝
և մեծանան ։
Բոլոր լուսնոյն՝ ի ջանելով
ներքինոյն կողման .
Եւ սուսերին հալածելով
առ վերնական ։
Յորժամ 'ի ծնունդն իւր՝ երև ի
նորոգական ,
Յարևմտից՝ զհայեց ունի
արևելեան ։
Իսկ յարևելս՝ 'ի լըրմանէն
մաշողական .
Առ յարևմուտս՝ զդէմն ունի՝
զհայեցման ։
Զի կէս զընտին՝ լուսով լինի
այնըմ կողման .
Որ 'ի լուսոյ արեգականն
մերձենան ։

Եւ որ 'ի միւս կողմն լինի,
և զատական.
Առանց լուսոյ՝ նա երևի
սառնական։
Իսկ ըզպատճառ՝ սրին լինել
խաւարական.
Որ պատահի՝ այնմ ինչ աւուրց
հնգետասան։
Յորժամ շիւռ՝ միմեանց լինին
հանդիպական.
Որ առ վերնաւն տրրամապիծն
և ներքնական։
Յորժամ վեցիւք կենդանակօքն՝
են հեռասան.
Հարիւր ութսուն աստիճանօք՝
են ըստ ական։
Սովորական լուսոյն ձգումն՝
հիւսիսական.
Որ 'ի ծայման լուսոյն՝ լինի
արևգական։

Այն է առեթ լուսոյ լուսնին,
և օգնական.
Որ անպակաս՝ միշտ երևի
նրշողական։
Իսկ որ երկինքն՝ է անուանեալ՝
վերշապական.
Մերձ յարեգակն հանդիպի՝
ըստ պատահման։
Ի մի և նոյն կենդանակերպ
և յաստիճան.
Ընդ մէջ անկեալ՝ լուսոյ ծագմանն
արեգական։
Եւ շուք երկրի՝ ի միջէ
կողմանական.
Ի հարաւոյ կամ հիւսիսոյ՝
դիմականան։
Նոքաւ ծածկի՝ լոյսն լուսնի՝
ծագողական.
Եւ մթացեալ՝ ճառագայթեցն
սևանան։

Եւ այս խնամք է Արարչին
իմաստնական .
Զի մի զաշխարհ՝ կարծեալ տեսցուք,
անապական ։
Արարածոց տալով զփառս՝
Աստուածական .
Հեռանալով՝ 'ի յերախտեացն՝
անսպառական ։
Այլ գիտելով միշտ զսոսա՝
ծառայական .
Եւ մեզ տուեալ՝ գործ ապաստու
և պաշտման .
Սրքօք տայցուք՝ զփառս Արարչին
անզբաւական .
Եւ մի լեցուք՝ զաղբիր գործովք ,
խաւարական ։
Իսկ առ վերոյ լուանին՝ երկրորդ
կոչեալ խորան .
Այն որ Եռմիս ասեն լեզուաւ
Հառոմական ։

Իսկ ի տաճկաց՝ որ Օտարիտ
ըզնա կարդան ։
Եւ ըստ Հայու

Իսկ որ ի հետ սորին, գօսին
երրորդական .
Ամիրոդիտէս՝ է ըստ Յունաց՝
վերակոչման ։
Զօհրայ կոչի՝ նա ի յազգէն
որ Տաճկական .
Եւ ըստ Հայոց մրն Լուսաբեր
ծագողական ։
Նոյն չարի և նա՝ պատէ զգօտին՝
կենդանական .
Զոր փայլածուն՝ ունի զընթացս
յարմարական ։
Սմա ընութիւն՝ ասեն լինել՝
յոյժ խընդական .
Երգեցողաց՝ և գուսանաց՝
գուշակական ։
Քաղցր եղանակ՝ ձայնից հմուտ՝
յոյժ ըղձական .
Եւ մեծագոյն՝ կանանց գուշակ՝
պըճնողական ։

Թողէց և զայլս՝ ասել սըմա՝
եբկայն ըզբան .
Որ 'ի յանբոյոս՝ և բուսական՝
է ազգական ։
'Ի չոբրորդու�՝ ելից կամարն՝
արեգական .
Զոր Եվինոս՝ ըզնա ձայնեն
ազգն Յունական ։
Այլ և Համբս խակ անուանեն
ըստա Արաբական .
Որ 'ի Հայուսմ՝ գեղեցկապէս՝
ատուզաբան ։
Ոմանք բնութեամբ՝ ասեն սըմա ,
յոյժ ցըբտական .
Եւ 'ի յարփուոյն առեալ ըզլոյսն՝
ըզջերմական ։
Եւ յարացոյց սըմին՝ ըներեն
նըմանական .
Զակըն բիւրեղ՝ յոբժամ ունիս՝
յարեգական ։

Թէպէտ և ցուրտ՝ է նա բնութեամբքն
յատկական .
Իսկ ի նմանէ՝ շողն որ կաթէ՝
հուր լուծական ,
Բայց հաւանիմ ես ասուրբ Գրոց՝
Աստուածարան .
Որ ի Հոգւոյն՝ Սրբոյ խօսեալ՝
մեզ յայտնեցան ։
Զի առաջին՝ լոյսն որ անեղ ,
արարչական .
Երկրորդ արար լոյս գեղեցիկ՝
և եղական ,
Եւ ի լուսոյն՝ երրորդ աւուրքն
ցեր և ցան .
Արկեալ անօթ՝ լուսաւորացրդ
զանազան ։
Եւ զՀրաշատ՝ լոյսքն պայծառ՝
և պարզական .
Արկեալ անօթքն լուսատու՝
արևական ։

Եւ ըզմնացեալ՝ լոյսն որ յետոյ՝
այլ թանձրական.
Անոսի լըցեալ՝ զանօթ լուսնին՝
որ խզական։
Եւ զայլ աղօտ թանձրատեսակն՝
և մըրական.
Խուսմըք աստեղաց են ընկալեալ՝
որք բազմազան։
Իսկ զընթացեալ՝ լուսաւորացըդ
շարժական.
Գէմ յարևելս՝ ասեն զնալ՝
ներհակական։
Զի յարևմուտս ընթանալ լինի
երկնի շրջան.
Եւ գէմ նմին՝ մոլորակացդ
անմիաբան։
Քեզ օրինակ՝ հաւատարիմ
վրկայական.
Մրջիւն եղեալ՝ առ ջրաղացին
շրջող երկան.

Նա շրջելով արագապէս
անտեսական .
Մրջիւնն ընդդէմ նորին զընայ ,
հանդարտական ։
Եւ ի լուսնոյդ՝ այս ցուցանի
ժամն ընծայման .
Որ ի կողմանն խակ ծընանի ,
արևմտական ։
Եւ երև ի զարևելեօք , ըստ
մասին աՃման .
Մինչ ի յաւուրցս կատարման
հնգետասան ։
Սոյն և ի կարգ հենդանակացըդ
տոդական .
Որ զհետ խոյին՝ կան ի կարգի
յարմարական ։
Եւ արեգակն է ի նոսա
փոխոխական .
Ընդդէմ երկնի ընթանալով ,
դիմակ ըերման ։

Այլ և նշանք՝ յոլովակի
Ներգործական ։
Ի ժամ ծագմանըն տեսանեմք
արեգական ։
Զոր ի Քըրկչին բանէ ուսցիս՝
աստուածական ։
Յարևմըտից՝ թէ ամպ ծագէ
անձրևական ։
Եւ ըզշնչուածն՝ որ ի կողմանց
հարաւական ։
Խորշակ ջերմոյ լինել նըշան
և տապական ։
Եւ ի յամպոյ՝ յամպ մտանելն
ջերմական ։
Խոնաւութեան օդոց ընութեան՝
է ցուցական ։
Այլ և ժամուց՝ ժամանակաց
է զոյական ։
Եւ չորեցունց եղանակաց
փոփոխական ։

Զիւնաբերբ՝ ի ձմեռնային
և սառնական ։
Եւ քաղցրաշունչ օդոյ հնչման՝
գարնանական ։
Բոցախառնի՝ և հրատապոյն
ամառնական ։
Եւ մեղմախառնբն ցրտութեան
աշնանական ։
Աստիճանօք հանգարտ գնացիւք՝
արդարական ։
Կարգ ըստ կարգի՝ միշտ ընթանան
ըստ մասին աճման ։
Ի հիւսիսոյ ելջեալ ի կողմն՝
հարաւական ։
Երկայնութեամբ՝ ըստուերք աճեն՝
գիշերական ։
Սառնամանիք ցրտոյ հընչեն
յոյժ խստական ։
Եւ ձիւնաբեր բերմունք լինին
ձըմեռնական ։

Իսկ ի դառնալն ի հարաւոյ
խոնարհական ։
Ի հասարակն երկնի հասեալ
անդ ի խորան ։
Հաւասարին ժամ.ք զերշիրայն
և տուընջեան ։
Գարուն լինի՝ զեղեցկութեամբ
վայելչական ։
Անսի ելեալ առ հիւսիսով
որ բարձրական ։
Երկայնութիւն ժամուցն աճեն
տուընջենական ։
Ամառնային՝ աւուրք առնեն՝
և ջերմական ։
Տունկք և սերմունք պտղաւէտին
վայելչական ։
Սառնամանիք օդոյ՝ առնին
փախստական ։
Ներքոյ երկրի տարեալ փակին
անդընդական ։

Ուստի աղբիւրք ցըրտին բղխեն
և սառնական ։
Որպէս յաւուր ձմերայնոյ
է ջերմական ։
Որ ջերմութիւն օդոյն լինի
աբգելական ։
Յորժամ յերեսս երկրի շնչեն
օդք ցրտական ։
Է՛ և այլ՝ գործ գեղեցիկ
արեգական ։
Որ բաժանէ զաշխարհս՝ մասունք
չորիքտասան ։
Եօթն որ յայն կոյս է աշխարհին
հարաւական ։
Զոր այրեցեալ գոտի ասեն ,
անընակ մարդկան ։
Եօթն է ի կողմն հիւսիսոյ՝
շէն բընական ։
Որք զանազան յինքեանս ունին
ժամք աճական ։

Որ առաջին բաժին աշխարհն՝
է Հնդկաստան .
Անդ միշտ և նոյն ժամքն լինին
երկոտասան ։
Որք և լման իսկ աշխարհի՝
մէջ կոչեցան .
Եւ 'ի սաստիկ ջերմութենէն
միշտ թրխացան ։
Իսկ 'ի յերկրորդ մասին են ժամք
երեքտասան .
Տիւք և գիշերք միմեանց լինին
փոխատրական ։
Աստ մինչ 'ի վեց մասն աշխարհիս
փոխանցական .
Մասունք ժամուց՝ որք անդ լինին՝
եօթնեւտասան ։
Իսկ առ մասին եօթնաբաժին
հիւսիսական .
Տիւք և գիշերքն փոփոխին
ժամուք քրան ։

Երբեմն տիւք՝ այսչափ աճեալ
երկարանան ։
Իսկ զիշերոյն ժամք՝ մինչ 'ի չորսն
նուազանան ։
Եւ որ 'ի յայն կոյս աշխարհի
հիւսիսական ։
Այն անբնակ 'ի մարդկանէ
և ցրտական ։
'Ի յեղանակ գարնանային
և ամառան ։
Ամիսս վեց՝ միշտ 'ի տեղի
անդ տիւ մընան ։
Զի 'ի խոյէն մինչ 'ի կրչեռքն
կերպ աշնան ։
Արեգականն է բարձրութիւն
հիւսիսական ։
Ոչ զոյ տեղի ընդդիմակայ
զերամբարձման ։
Առնել ընդդէմ շուք և ծածկոյթ
ըստուերական ։

Իսկ ի յաւուրս աշնանային
և ձըմերան .
Մի՛շտ անդ զիշերք՝ ամիսքս վեց
երկարանան ;
Զի առ հարաւ ցածանալով
արեգական .
Ո՛չ ժամանէ անդ առ նոսա
լուսոյն ծագման ;
Սա՛ է զուշակ թագաւորաց ,
ազգի մարդկան .
Եւ յանասունս ըզձի հզօր
և խրոխտական ;
Ի զազանաց՝ ինձ և առիւծ
ըրդողական .
Եւ ի թռչունս՝ զարծիւ և զայլս
որսորդական ;
Այլ և ի ծոյսս՝ այնք որք պատուով
իշխանական .
Անուշահոտ ծաղկանց որք կան՝
ի բուրաստան ;

Իսկ որ ծագումն արեգականն
պատուական ։
Խաւարացեալ ժամանակօք
նըսեմանան ։
Յորժամ վիշապն 'ի նա մերձի՝
'ի յաստուծան ։
Եւ անդ լուսնին իսկ հասանէ
ժամ ծընընդեան ։
Ընդդէմ լուսոյն անկանելով՝
ընդդիմանան ։
Եւ ոչ տան թոյլ մեզ երևել
լուսոյն ծագման ։
Այլ այս խնամք է Բարձրելոյն
հանճարական ։
Որով զաշխարհս այս տեսանեմք
փոփոխական ։
Եղեալք պատմեն զփառս Աստուծոյ
անեղական ։
Զնա քարոզեն միշտ հապէս՝
անեղծական ։

Առ մեզ խօսին առանց լեզուի
բարբառական .
Ուսուցանեն առանց բանի ,
անյօդական ։
Որ և 'ի ժամ խաւարելոյն
արեգական .
Եթէ ունէր նա մարդկօրէն
բարբառ և բան .
Աղաղակեալ յերկնից զոչէր
առ ազգ մարդկան .
Դու ինձ զիմբոդ անուն ասես
աստուածական ։
Որ սպասաւոր եմ՝ քեզ տուեալ
անլռական .
Եւ ոչ թիւրիմ 'ի հրամանէն
արարչական ։
Ընդքեզ 'ի գործ զարթուցանել
լուսով ծագման .
Եւ ըզգիշեր քեզ առ հանդիսաս
պատրաստական ։

'Ի ձմերայնի՝ սառամբ լինիմ
ես ցըրտական ։
Եւ թանձրախիտ ամպով ծածկիմ
գարնանական ։
'Ի հըրակէզ տապ տոչորիմ
ամառնական ։
Եւ 'ի լուսոյս իմ խափանիմ,
ըստ պատահման ։
Ոչ թէ միայն՝ չեմ 'ի պատուէ
աստուածական ։
Այլ և ոչ մարդ եմ կենդանի
և բանական ։
Այլ դու հայեա յիս գեղեցիկ
լոյս եղական ։
Եւ փառս տուր Արարողին
միշտ յաւիտեան ։
Եւ հինգերորդ երկին՝ Հրատին
է կայարան ։
Զոր կէսք Արէս և այլք Մառեխ
ըզնա կարդան ։

Իսկ մեք Հրաստ նրմին ասեմք
կիզողական .
Զերմին և չոր և այրեցող
բոցանման ։
Որ ըզգոտին իւր պատելով
պարագրական .
Եւ աւարտէ ըզնա ամիս
ութ և տասան ։
Օր ընդ կիսոյ կայ յաստիճանն
ընթացական .
Ամիս և կէս առ կենդանեաւն
կատարման ։
Զայլսն թողից ասել ըզբան
քննողական .
Յորս և ունի ինչ զուշակմունք
ազգողական ։
Վեցերրորդին սկսայց ասել
ասաղ ըզբան .
Որ նա կոչի Զեւս 'ի բարբառն
Յունական ։

Եւ ի Տաճկացն Մուշթարի ,
է շնորհական .
Եւ Լուսընթաց՝ որ ի յորդւոցն
Հայկական ։
Ջերմ և դալար բնութիւն բարի
հաստատական .
Գուշակ բարւոյ և հաւատոյ
գլուխ մարդկան ։
Գինեական և ուղղախօս
ճըշմարտական .
Եկեղեցեաց և սուրբ տեղեաց
աղօթարան ։
Եւ ի բուսոց քաղցր և անուշ
ճաշակական .
Եւ յարուեստից թագ և պսակ
արքայական ։
Զգօտին պատէ զիւր ի տարին
երկոտասան.
Իսկ զաստիճանն երկոտասան
աւուրբք լրման ։

Այս գեղեցիկ՝ աստղ բարեոյ
ազգողական .
Որ յիմաստնոց բնութիւն սրա
յայս քննեցան ։
Է ի կամարն յեօթներորդ
ի վերնական .
Զոր Ցոյնք Կռոնոս՝ և այլք Զօհալ
զանուանն տան ։
Ցրտին և չոր բնութեամբն չար
և վնասական .
Գուշակ լուծից և ծերութեան
և տրտմական ։
Ան և երկիւղ և մահաբեր
կասկածական .
Եւ այլ բազում մասանց երաց
գուշակական ։
Պատէ զգօտին ի թիւ տարեաց
երեսնական .
Եւ զաստիճանն՝ ի յերեսուն
օր ամսական ։

Ո՛Չ թէ տարտամ է սա գնացեալ՝ ,
կամ ծանրական .
Այլ յոյժ անբաւ բարձր է երկին ,
սորայն կայան ։
Համեմատէ զերկինքս զայս
ըզլուսնական .
Յայն որ կամարն Երևակին
ընթացարան ։
Որպէս և օր քան ըզտարի
է նուազական .
Այնչափ և նուրբ՝ երկին լուսնին
քան ըզնորայն ։
Զնա տանուտէր ասեն Դարուն
առաջնական .
Յորում և կեանք՝ մարդկան լինէր
երկարական ։
Որպէս վերջին դարուս լուսին
մաշողական .
Որ և նուազ են կեանք մարդկան
սակաւակեան ։

Որք այսոցիկ իմաստնաբար
հետևեցան ։
Եւ առ ի սոյն երկասիրել
աշխատեցան ։
Ո՛չ ընդունայն ինչ կամ ընդ վայր
բարբառեցան ։
Այլ կրթելով ներհմտարար
տեղեկացան ։
Զոր ի նոցունց աշխատութեանց
որք վարժեցան ։
Փոքր ի շատէ նշանակեմ
սակաւ ըզբան ։
Մոլորակաց թիւ եւ անուն
որ ասացան ։
Են ի վերոյ եւ ի ներքոյ
Արեգական ։
Այն որ ի բարձր եւ գերազանց
երկինքն կան ։
Նոքա յերկար ամաց սաստիկ
աղքեն նշան ։

Եւ որք ներքոյ՝ և ներքագոյն
շրջին խորան ։
Նոքա աւուրց են՝ և ամսոց
գուշակական ։
Է՛ և պատճառ մոլորական
սոցա կոչմանն ։
Վասն որք յուղիղ գնացէց իւրեանց
յետըս դառնան ։
Զի յարևելըս դէպ ուղիղ
միշտ ընթանան ։
Եւ յարեգակըն մերձ եղեալ
կրկնին ևկան ։
Որպէս փոքունք՝ որք արքայէ
հանդիպանան ։
Անդէն կասին յիւրեանց գնացէցն
և մեղմանան ։
Նոյնպէս նոքա 'ի Լուսաւորըն
Մեծ՝ հրպման ։
'Ի մեծ լուսոյն և հրապայծառ ,
կան յայրեցման ։

Բայց ես և զայս՝ առ ի նոցունց
լուայ ըզբան .
Թէ երկոքին նոքա միմեանց
ներհակեան ։
Ոչ լուսընթաց՝ և մուշթարին
է վերնական .
Զայն ճոխութեան՝ և մեծութեան
ասեն նըշան ։
Իսկ փայլածուն՝ զոր օտարքիտ
խոնարհական .
Զայն հնարագործ իմաստութեանց
վարժողական ։
Սոքա դիմակ գործով՝ միմեանց
վիճակեցան .
Եւ առ միում՝ անձին՝ սոքա
ոչ ընակեան ։
Զի մեծութեան՝ ուսմունքըն չեն
ախորժական .
Եւ ոչ ուսմանց՝ հոգք աշխարհիս
պատրողական ։

Իսկ թէ իւրեանց տուն զոր ասեն
պատահական .
Մարդն երկոցուն՝ շնորհաց լինի
ասպընջական ։
Եւ այս պարգև՝ Բաբելաբին
առատական .
Որ զարժանին ընտրէ՝ ի զործ
մարդկան պիտան ։
Բայց զի բազում՝ են այսքամ տէր ,
բայց անարժան .
Զի աստուծոյ շնորհ՝ն է առատ ,
անզբաղական ։
Ե՞ն և այլ ասասեղ՝ երկու
ընդդիմական .
Մուշթարին և Լուսաբերն ,
որ է Զօհրայն ։
Զի Լուսընթացն որ՝ի վերոյ
արեգական .
Զնա սրբութեան և մաքրութեան
ասեն իշխան ։

Եւ զլուսաբերն՝ որ առ ներքոյ
խոնարհական .
Զայն խնդութեան և ցանկութեան
որ մարմնական ։
Իսկ ըզպատճառն այսրմ զործոյ
վկայական .
Ո՛չ տարադէպ , այլ մտաւոր
խորհրդական ։
Զի նա՝ ի վեր՝ առ վերնայինն
յարմարական .
Սա՝ ի խոնարհ՝ երկրաւորացս
տարփողական ։
Բայց աստեղացս՝ որոշ են տեղ
և կայարան .
Ոմանց բարեաց , զայլսս չարեաց
ասեն նշան ։
Զի որք պլրճեր՝ և կենդանեաց
են կերպարան .
Զոմանսս տուն նոցին ասեն ,
իւր սեփհական ։

Եւ ի տեղի՝ ուր յԱւարչէն
ստեղծեալ եղան ։
Զնոյնն փառաց և բարձրութեան
ասեն կայան ։
Եւ որք բնութեամբ մոլորակին
հանդիպանան ։
Ըզնա բարի և շնորհաւոր
ասեն բնական ։
Ոմանց սիրոյ տես և հայեացք
խաղաղական ,
Զայլս սառն դէմ և անյարմար
վիճողական ։
Եւ ապացոյց՝ սորին բերեն
նմանական ։
Զոր չէ արժան խակ աղաւտել
ըզնա մարդկան ։
Զայն որ ի սան խրատ լինի
հանդիպական ։
Որպէս թէ ոք՝ յիւր բուն երկրին
հաճոյական ։

Եւ զոր փառաց և բարձրութեան
ասեն կայան ։
Որպէս թէ ոչ յիւրոյ հայրենիսն
ըստացական ։
Եւ որ ընութեան տեղւոյն կերպին
հանդիպական ։
Որպէս՝ քաղաք նորին՝ և մերձ
առ ազգական ։
Իսկ՝ որ սոցուն՝ տեղեաց ընդդէմ
պատահական ։
Զնոսին փակաւ՝ իսկ՝ և անզօր
անգործնական ։
Այս քեզ սակաւ բան յարտաքնոց
ուսուցեալ ։
Թէ ախորժէ ոչ՝ և չառնէ
քամահական ։
Զի աստեղաց ընութիւն չասեմ՝ք
ազատական ։
Կամ առ յինքեանց ներգործելով
իշխանական ։

Այլ ի մարդկան պէտքս կազմեալ
ծառայական ։
Եւ յԱրարչին հրամանքս կան
միշտ անխափան ։
Զի որ ըստեղծ աշխարհս բանիւն
արարչական ։
Զնոսա ձեռին գործիք ունի
յարմարական ։
Որ արուեստիւ շարժեալ շրջէ
զգունդն երկնական ։
Եւ նոյն շարժմամբ ժամանակաց
թիւք գոյանան ։
Իսկ ժամանակք՝ լուսաւորօքդ
որք ընթանան ։
Որպէս նիւթոյ ինչ տարերացդ
են գործնական ։
Եւ՝ համայնից գոյից տարերքս
են ծնողական ։
Որք կենդանիք և բուսականք
բաղկացական ։

Այս համառօտ ցոյց արուեստին
աստուածական .
Որ զլուսաւորսդ կազմեաց զոլ ծիք
իւր եղական ։
Բայց չէ զարմանք այս՝ տեսանող
մըտաց մարդկան .
Թէ ի բարձունս երկնից լուսոյ
ծաղկունք ծընան ։
Որ զօրութիւնս ինչ ընաւորեալ
ունին ազգման .
Զոր Արարիչն եդ ի նոսա
յօգուտ մարդկան ։
Որպէս արմատքս այս՝ որ յիրեաս
երկրի բուսան .
Ներգործութիւնս ունին յինքեանըս
ընական ։
Նա և պըտուղք երկրի համովքըն
զանազան .
Ոմանք կապոդք են , կակուղք՝ այլք
և լուծական ։

Ոմանք ցըրտինք են այլք քաղցունք
և ջերմական ։
Որք ի տարերց՝ նոյնք զանազանք
որակացան ։
Նոյնպէս ծաղիկք երկրի ի յայս
բնաւորեցան ։
Եւ համօրէն տունկք և արմատքն
սեռական ։
Ոմանք ցաւոց հիւանդաբերք
և մահական ։
Այլք զօրութեամբ բժշկարար
առողջական ։
Թոյղեց զթռչնոց և զգազանաց
ճառել ըզբան ։
Որք զանազան կերպ և ի բարք
բնաւորեցան ։
Է՛ և ի խունկս ինչ կենաման
զարմացական ։
Որ ըզնմանէ են սքանչելի
բանք ճառական

Եթէ ի ջուր ինչ կաթսայից
եռանդնական ։
Արկեալ փոխէ նոյն ըմբուռթեամբըն
սառնական ։
Այլ և ի քուն գոլով մարդոյ
և թըմբրական ։
Սերձ առ շըրթունսն եղեալ ըղձէ
բարբառ և բան ։
Այլ և կարծիք ինչ կուսութեան
յոք լուծական ։
Զնա ծխելով իսկ ճշմարիտ
տեղեկանան ։
Են և այլ և ս ծաղկունք յոլով
զարմանազան ։
Որք զօրութիւնս ինչ սքանչելի
ունակացան ։
Արդ թէ ի բոյսս է ինչ ընութիւն
ներգործական ։
Որք եղծականք են առօրեայք
և անցական ։

Ապա և մի լեցի կարծիք
երկրայական ։
Թէ զօրութիւն ի լուսաւորդ
են ազգական ։
Որ ի լուսոյ են և ի հրոյ՝
նիւթ պարզական ։
Եւ տարերացս՝ որք ի սոցունց
են շարժական ։
Բայց թէ վասն էր ընաւորեցան
այս առ մարդկան ։
Զաշխատութիւնս այլոց առնել
եպերական ։
Ես այսմ երեք պատճառ ասեմ
դիպողական ։
Եւ դու ուղիղ մտօք լսէ
յօժարական ։
Մի՝ թէ կարծիք ինչ է ուսումն
թերութեան ։
Եւ կամ անշահ իսկ աշխատանքն
սրքնութեան ։

Երկրորդ թէ ծոյլ իսկ և տարտամ
է կրթութեան .
Եւ ոչ առեալ զուսման ճաշակըն
քաղցրութեան ։
Երրորդ մախանք՝ ինչ նախանձու
և հեռական .
Որով մաշէ զհոգին հրով
տոչորական ։
Բայց զոր երիցըս կարգեցի
վերջին ըզբան .
Նախ առաջին ըզնոյն ցուցից
քեզ խրատական ։
Մի նախանձուն հրով մաշիր ,
կամ տրտմական .
Մի զընկերաւրն քամահեր
որպէս զանբան ։
Մի ըզբարւոյն չար ասասցես
ըզկերպարան .
Մի ըստեղծուած Վեհին տեսցես
որպէս խոտան ։

Որպէս ծարաւ աղբեր գէմ ի՛ւ
յօժարական ։
Եւ ըզպասքեալ միտպ արբուսցես
բանիւք ուսման ։
Որպէս լուսոյ ծագման յըստակ
արեգական ։
Նոյն ըզհոգւոյդ աչքս բացցես
տեսողական ։
Մի՛ յայլասեռ յազգաց զարշի՛ր
խնդրօղդ ուսման ։
Մի՛ յաղքատաց մեծամբոխի՛ր՝
որպէս իշխան ։
Այլ ա՛ռ ի՛ քեզ որպէս ի՛ փշոյ
վարդ հոտեւան ։
Թէ զոք անօթ շնորհաց տեսցես ,
և պատուական ։
Մի՛ ծուլութեամբ դանդաղեսցիս
որպէս զանբան ։
Մի՛ զանգաստան հոգւոյդ թողցես
որպէս խոպան ։

Մի՛ ապառաժ՝ զսիրտդ արասցես
բանին սերման ։
Եւ մի փշաբեր՝ անտառասցիս
և հեղձական ։
Մի՛ ճանապարհ՝ ոտից լիցիս
դու և կոխան ։
Զայս 'ի բանից փրկչին ուսցիս
առակական ։
Բայց որ զարուեստս այս նախատեն
իբր անպիտան ։
Որ 'ի մերոցս ազգաց թողեալ
արտաքսեցան ։
Եւ այսոցիկ պատճառ ունին
խորհրդական ։
Զի չարաչար ուսմունք յոմանց
խառնակեցան ։
Եւ որք յիմար մլրտօք սրմին
ծանօթացան ։
Նոյնք իմաստուն՝ զանձն և ներհուն
համարեցան ։

Ը զտեսութիւն մըտաց ունին՝
յոյժ ախտական ։
Եւ ի զրոց սրբոց լուսով
ոչ վառեցան ։
Սոքօք զանձառ՝ խնամք սիրոյն՝
Արարչական ։
Որ արուեստիւ ետ ի բնութիւնս
այս եղական ։
Զի ի զոյիցս եղականաց
և եղծական ։
Զ Գոյացուցիչն անեղ ուսցուք
անապական ։
Զայն աստեղաց բնութեանն ասեն,
յարմարական ։
Իշխանաբար զնոյն ներգործել
անբանական ։
Այլ և զմերն իսկ շարժութիւն
իշխանական ։
Առ ի ներքոյ նոցին կարգել
բնաւորական ։

Բայց որ զուտ կան գործոյն ունին
որսորդական ։
Եւ յաղտաղտուկ ծովէ որսան
ինչ պատուական ։
Առ 'ի ցամաք տեղի նասին
հանդարտական ։
Եւ ըզխոտանն 'ի՝ տրեն
պատրաստական ։
Կամ որ հրմուտք են արուեստից
բրժբշկական ։
'Ի յոգնակի ծաղկանց լինին
հաւաքական ։
Այլ և զեռնոց թիւնաւորաց
և սողնական ։
Խածեալ վիրաց նոցուն կազմեն
դեղ փրբկութեան ։
Որով և դու իսկ իմաստուն
և խոհական ։
'Ի յամենայն ուսմունս գտցես
ինչ ուղղական ։

Եթէ յստակ զմիտսդ ունիցիս
տեսողական ։
Ի յախտաւոր բանից ճնալով
անցանկական ։
Որպէս ըզլոյս պայծառ ծագեալ
արեգական ։
Ի գարշահոտ տեղիս ճնալով
անխառնական ։
Մի՛ որպէս ջուր միտս ստանալ
հեշտ լուծական ։
Այլ որպէս հուր հատուցանող
և վերնական ։
Իսկ որք թիւրեալք բանիւք խօսին
սրխալական ։
Եւ զոր քննեն ոչ կատարի
ճշմարտաբան ։
Ո՛չ զի արուեստն է անկատար
և թիւրական ։
Այլ որք կարիւք զանձինս ասեն
դիտողական ։

Եւ ոչ իսպառ ժուժկալեցին
'ի կէտն ուսման .
Այլ զաղտաղիուն շաղախեցին
իսկ անպիտան ։
Կամ 'ի համար հաշուոյն եղեն
մոլորական .
Կամ 'ի գիտնոց ոչ վարժեցան
ընտրողական ։
Մանաւանդ՝ ուսուցնականք
որ այժմըս կան .
Նախ քան զբսկիզբն համարին
գիտել զվախճան ։
Յաշակերտաց կարգէ լինին
փախըստական .
Եւ բարուն'ք անուամբ շրջին
յոյժ պերճական ։
'Ի յերկասէր քրիստանց մընան
ունայնական .
Եւ վաստակոց պըտղոյն ցանկան
առանց սերման ։

Որ և յիմոց բանից դատիմ
անօգտական ։
Եւ անպատճառ լինուս լռեմ
անձայնական ։
Զի զժամանակս իմ կորուսի
յոյժ անպիտան ։
Եւ վաստակոց մըշակ եղէ
անշահեկան ։
Զմասունս հոգւոյ ունայն թողի
անգործական ։
Եւ ըզմտացս աղբիւր խցի
առանց բըղխման ։
Զի որք ասեան են մերձակայք ։
և ազգական ։
Զիս ստիպէին 'ի հոգս ունայն
աշխարհական ։
Յոր փուլթային նոքա՝ չեղէ
ինչ օգնական ։
Եւ ոչ սրտիս իմ բաղձանաց
նոքա նըման ։

Զի որ մարմնոյ էր ցանկալի՝ք
նոցայն էր ջան ։
Եւ ինձ թողուլ զայնպիսի փոյթ
սիրել ըզբան ։
Նո՛քա սրբասիս իմ տենչանաց
ո՛չ ըղձայ՝ան ։
Եւ ես նոցուն՝ց հետևելով
եղէ անբան ։
Զի՝ ի յերկրիս , յորում էի
տընկոյ նըման ։
Սոցա պըտուղ իմ վաստակոցն
էր անպիտան ։
Եւ որ՝ք պտղոյն քաղցրաճաշակ
ո՛չ բաղձանան ։
Եւ ո՛չ՝ ի տուն՝կն իսկ զթալով
տանին դարման ։
Վ՚ասն այնորիկ բարձի թողի
զճաշակն ուսման ։
Եւ զանձն՝ ի գործ ետուս հոգոց
աշխարհական ։

Թէպէտ անձուկ սրտիս՝ նեղէր
տագնապական ,
Եւ 'ի խորոց սրտէ՝ հնչէր ձայն
հառաչման .
Այլ որ 'ի դէպ՝ հառակն ուսման ,
եւ մանկական ,
Երբէք և ոչ ինձ պատահի՝
քանզի անցան . *
Այլ առ 'ի նոյն սիրով դառնամ,
յոյժ ըղձական ,
Եւ զերկնային զարդուն ճառեմ
ներբողական ,
Զոր առ տեղեաւն՝ քեզ ծանուցի
բանք մարմնական .
Զնոյն եղանակ՝ առփսխեցեալ քեզ
հոգեկան ։
Ո՛վ սքանչելի ձեղուն յարկի՝ այս
մեծի տան ,

* Պոէսին 'ի Զէոտգրէն

'Ի Բարձրելոյն բանէ ձգեալ
որպէս խորան .
Եբրակի սեռից ազանց
ժողովարան ,
Որ.ք 'ի ծոց .քո պարուհակին՝
խրախճանական .
Դու յարկ Մեծին ձեռամբ շինեալ
արքայական ,
Զահ.ք 'ի բարձանց՝ 'ի .քեզ կախեալ
անշիջական ։
Դու անթառամ ծաղկանց՝ բուսեալ
մեծ բուրաստան ,
Որ.ք յանդաստան .քո զեղեցիկ՝
ծաղկազրեցան .
Ոչ թէ միայն՝ .քո պարանոց
զարդարեցան ,
Այլ բովանդակ մարմին և անձն
շ.քեղացան ։
Յոյժ մեծութիւն՝ .քո հրաշազեղ
անչափական .

Հանդերձքս նուրբ՝ և պատմուճան՝
քեզ կարգեցան։
Ոչ թէ միայն՝ կրկին ակուն.ք
որ.ք ճոխացան.
Այլ յոգնակի ակուն.ք լուսոյ
շարադրեցան.
Եւ մարգարիտքս լուսափայլ՝
որ.ք յեռեցան,
Ընդ զիշերոյ սպիտակափայլ
Ջահ ճախրական,
Իսկ ի տուէ՝ ջազմափայլիւն
լոց կայծական.
Յոր զիշերոյն ադօտ փայլուն.քն
ծածկեցան։
Դու անբաբբառ, և միշտ լինիս
պատմողական,
Զ.քո գեղեցիկ Յօրինողէն՝ որ
անսահման.
Զայս վկայէ մեծին Դաւթի
Սաղմոսարան,

Եւ Առաքեալն սուրբ Պօղոս
զարմանական ։
Դու վարդապետ մեզ ուսուցիչ
անխօսական ,
Ի քեզ ունիս տառք լուսեղէն՝
ընթերցական .
Տառք քո խօսունք՝ մեզ խրատիչ՝
անձայնական ,
Որք են մատանց գործ Բարձրելոյն՝
անհասական ։
Դու օրինաց տախտակ զրոյն՝
որ բընական .
Զոր ընթեռնում՝ հասարակաց
որդիք մարդկան ,
Ի շարժմանէդ մշտախաղաց
անկայական,
Զանշարժելին շարժող բնաւիցս
որ այժըմ կան ։
Յարարածոցդ համագումար՝
որ տարբրական ,

Զարուեստաւորն՝ որ հրանիւթիցն
անտեսական .
Դու խրատիչ մեզ յաշխարհի ,
և վարժարան .
Որ իմաստուն զմեզ յօրինես՝
և բանական ,
Դու 'ի ծոց քո՝ զմեզ ամփոփես
ծնողանման .
Ոգխմուն.ք բարեաց՝ մեզ ընծայես
փարթամական ,
Դու մեզ դայեակ՝ դաստիարակ
որպէս մանկան ,
Ժամանակաւ ըզմեզ խրատես
սաստողական ,
Հրոյ ցոլմուն.ք կայծակնաթափ
փայլատակական ,
'Ի ծոցս ամպոյ՝ հողմով հոսեալ
հուր կիզական ,
'Ի ՀՐՇՄանէն՝ սաստիկ փայլեալ
նիւթ կայծական ,

Եւ պատառմամբ՝ թնդմամբ՝ որոտ
ընդոստական ։
Իսկ Լուսաւորն փոքր՝ իշխան
գիշերական ,
Խաւարային ժամուն 'ի լոյս՝ մեզ
ուխտական ։
Սա զօրինացն հընոյ բերէ
ըզկերպարան ,
Որ Մովսիսիւ տուան ազգին
Իսրայէլեան .
Լոյս գիշերոյ՝ ժամանակին
աղօտական ,
Մինչ դեռ ծագեալ չէր՝ Արեգակն
Արդարութեան ։
Լուսինն, որ ոչ կարէ ծագել
լոյս հանրական ,
Այլ գիշերոյ մասին նուազ
փայլողական .
Նոյն և օրէնքն՝ որ տուան տոհմին
Աբրահամեան ,

Ոչ օգնէին , այլ՝ յայտնէին
զմեղս մարդկան ։
Այլ և աստեղք համագումար
շարունական ,
Որք ընդ լուսնին՝ խումբք և կաճառք
են յոգնական ։
Զմարգարէից դասքն երջանիկ՝
որք մաքրեցան ,
Ընդ օրինացն՝ լուսատու
մարդկան տուան ։
Աստեղք ճեմեն՝ յերեկոյին
ժամուն սկզբման ,
Կարգ ըստ կարգի՝ խաղան 'ի լոյս
առաւօտեան ։
Մինչ Արու սեակն՝ առաւօտուն
լուսոյն նշան ,
Որ աւետիս տայ՝ գալստեանն
սրեգական ։
Այսպէս և պարք մարգարէիցն
որք ընտրեցան ,

'Ի Սուրբ Հոգւոյն՝ Ճրագունք լուսոյ
շնորհաց լուցան .
'Ի Մովսիսէ՝ մինչ 'ի յՕծեալն՝
Աստուածընն Բան ,
'Ի խաւարի կուսապաշտութեան՝
լոյս ծագեցան ,
Տանն մեծի՝ այսմ աշխարհի՝
որ զգացական ,
Պատգամախօսք և լուսարերք
առաքեցան ։
Սոքա զխորհուրդ՝ անպարագիծն
Աստուածութեան ,
Յոգիս մարդկան նըշուլեցին
լուսոյ նըման .
Մինչ Արուսեակն՝ Արեգականն
Արդարութեան ,
Հին օրինացն Աւարտոդին՝ նորոյս
Սկըզբման .
Սա Յովհաննէս է ամլոբդին
Զաքարիեան ,

Որ կարապետ՝ Աստուածորդւոյն
էր գալստեան .
Նոյն և Ճրագ՝ շնորհօք վառեալ՝
օրինական ,
Մխիթարիչ խոր զիշերոյն
և թախծական .
Եւ զիշերոյ հաւ քաղցրախօս
և զուարճական ,
Զարթուցանող մարդկան՝ ի քնոյ
թմրողական ։
Դարձեալ և այլ քեզ օրինակ
յարմարական ,
Անմեղ մարդկան՝ որք և մեղօք
խաւարական .
Սա յարևելս՝ զոլով բոլոր
իսկ ի լեռման ,
Եւ առ սակաւ սակաւ խաւար
փոխարկական .
Իսկ յարևմուտս կոյս՝ բոլոր
լուսոյն ունայն ,

Առ փոքք փոքքը՝ աճմամբ 'ի լոյս՝
զուարթական։
Նըմանապէս՝ մինչդեռ է մարդն
անմեղական,
Արդարութեան գործովքն 'ի լոյսն
է հոգեկան.
Իսկ թէ մեղացն ըստուերք 'ի նմա
հրգօրանան,
Արդարութեան լուսոյն նշոյլք
տրգեղանան.
'Ի կատարեալ բարւոյն լինի
նա լուծական,
Եւ հեշտութեան ախտեցն մուտք
'ի նմա բանան.
Անդէն բոլոր մասունք հոգւոյն
տրգեղանան,
Եւ յարեւմուտս կոյս՝ լինի
դիմեցական։
Իսկ թէ ծագէ 'ի նմա շընորհքն
գըդջական,

Մինչ գեռ 'ի մէջ մեղաց՝ նստէ
վարանական.
Ըզ չարաչար մեղսն լինի
նա խոստովան,
Եւ յառաջին փառացըն զայ
'ի կերպարան։
Այս քեզ զպրոց աղքատիստաց՝
որպէս մանկան,
'Ի յանբարբառ տառէցն երկնից
նըշան ուսման.
Այլ և զպայծառ լուսոյն աղբիւր
միշտ հոսական,
Ըզ գեղեցիկ ակն աշխարհի
լոյս ցուցական.
Զնա 'ի կամարըդ քո ընդես
ջահ փայլական,
Որ զկերակուրըն հրոյ բաշխէ
ընաւէց պիտան։
Սա մեզ խրատ օրըստօրէ
քարոզական,

Ըզմահ և զկեանք օրինակէ
զէմ յանդիման .
Առաւօտուն ծագմամբ ըզծնունդըն
մայրական,
Երեկոյին թաղմամբ՝ ըզմուան
ի գերեզման ։
Սա զօրինակ ցերէ Լուսոյն
անեղական ,
Որ ի ծոցոյ Հօր՝ է ծընունդ ,
Որդի և Բան .
Յարևելից զեղոյ ծագէ
փեսայական ,
Արագապէս ընթացս առեալ
հրեշտական ։
Զարեգական արդարութեան
պատմէ ըզբան ,
Զանանիւթ Լուսոյն մեզ քարոզէ
լոյս եղական .
Սա ծագելով յարևելից
Լուսոյն կողման ,

Որպէս ծննդեամբ Բան 'ի Հօրէ
անՀառական .
Սա նիւթական՝ օդով լինի
պարագրական ,
Որպէս աննիւթ՝ լոյսըն մարմնով
բնութեամբ մարդկան.
Սա ստեղծական լոյս համասփիւռ
անմարմնական ,
Որ օդային՝ մարմնոց եղև
պարունական .
Ո՛չ 'ի բնութիւն՝ ենչ փոխեցաւ
այլանման ,
Այլ յոր յառաջն էր՝ անմարմին
և սկզբնական ։
Նոյնպէս ծընուանդըն Հօր Որդի
որ լոյս և Բան ,
'Ի յարգանդի Կուսին մարմին
առ թանձրական .
Սա է Աստուած՝ պատճառին Հօր
նոյն էական ,

Նոյն է և մարդ՝ որդի Կուսին
ծնունդ մայրական։
Եւ որպէս լոյսն անկեալ յանոթ
արեգական,
Ոչ թէ կրկին զնա անուանեմք
բաժանական,
Այլ մի և նոյն իսկ տեսանեմք
անզատական։
Զ Լոյսն անմարմին՝ և զիւր անոթն
որ օդական,
Նոյնպէս փառացն Հօր Ծաղումն
և կերպարան.
Որ 'ի Կուսէն՝ զգեցաւ զկերպ
ծառայական,
Ո՛չ թէ երկուս որդիս ասեմք
կամ՝ կերպարան.
Այլ մի և նոյն՝ խոստովանիմք
զԱստուածն Բան։
Եւ որ ունէր՝ զբնութիւնն
Հօր հաստատական,

Նոյն և ըզդէմ՝ առանձնակի
և յատկական .
Նա ինքն էառ ժամանակաւ
բնութիւն մարդկան ,
Այլ և ըզդէմ ճշմարտապէս
առանձնական .
Այլ ոչ յերկուս իսկ բաժանի
բնութեանքն բան ,
Եւ ոչ կըրկին՝ ասել ըզդէմն
որոշական ։
Այլ մի և նոյն՝ է մարմնացեալ
Աստուած ըն Բան ,
Բնութեամբ , դիմաւ , առանձնու-
թեամբըն միական ։
Ո՛չ անմարմին բնութիւն եղև
այլայլական ,
Եւ կամ՝ մարմնոյ՝ ինչ թանձրութիւն
փոխարկական .
Այլ կատարեալ բնութեց երկուց
նոր խառնման ,

Միաւորեալ ահեղապէս
անճառական ։
Մարդ լինելով՝ բոլորովքիմբ
Աստուածընթան ,
Եւ ըզբնութիւնն իւր՝ պահելով
անշփոթական ։
Աստուածացեալ բոլոր բնութիւնն
Ադամական ,
Եւ զգայութիւն իւր ոչ թողեալ
ըզթանձրական ։
Լեր ճշմարիտ՝ և բարեփառ
ուղղադաւան ,
Եւ յերկոսին սիւն հաւատոյն
հաստատական ։
Որպէս թռչունք՝ երկու թևօք
յօդ սլանան ,
Արագապէս՝ զօդն հերձեալ
բարձր ընթանան ։
Եւ որպէս մարդ՝ որ կենդանի
և բանական ,

Յերկուց ոտից՝ կայ հաստատուն
անխախտական,
Այսպէս և դու՝ զքան հաստատոյն
տնօրինական,
Այս երկոքուն՝ բարեպաշտութիւն
փառաստրական։
Ըստ մի բնութիւն խոստովանել՝
ըստ միութեան,
Ոչ ուրանալ՝ յորոց եղեն
ըստ զոյութեան։
Այլ զի յերկուց կատարելոցն
միական՝
Ոչ բաժանել, ոչ խառնակել
շփոթական։
Լոյս զերդ ցեկ զենուսդ ալ
հրեշտակական,
Եւ զերկոսին զէնս ըզգեցեր
անվթարական։
Ի թշնամեաց՝ յոր պատահիս,
մարտ խլմբական,

Ըստ պիտոյից՝ արկցես 'ի գործ
գիպոդական .
Ըզճանապարհ ուղիղ գնասցես
արքունական ,
Զի յերկոսին կողմանք են
փուշք խոցոտական ։
Որպէս կամուրջ՝ վերայ գետոց
յորդահոսան ,
Զառ 'ի վերայ՝ նոյն և ներքոյ՝
ջուր հեղձական .
Այլ գու զմիջին՝ ընթանալով
նրբակածան ,
'Ի յերկոցուն կողմանց մնասցես
անվնասական ։
Մի բաժաներ՝ զընթութիւն Բանին
որոշական
Ըստ Նիստորի չարաբանութ
վատթարն ուսման ։
Ոչ 'ի մարմին՝ բանին բնակել
նախատեղծական ,

Եւ շարայար՝ ասել ընութիւնք
բաժանական։
Մի զկիրս և զգործս ինչ իմասցիս
երկագաւան,
Աստուածութիւն և մարդկութեանն
զանազան։
Այլ մի և նոյն՝ իսկ փրկագործ
անօրինական,
Զոր իւր մարմնովն կատարեաց
Աստուածն Բան։
Որպէս և իւր է իսկ մարմինն
անզատական,
Նոյն է և կիրք մարմնոյն՝ և իւրք
ներգործական։
Որպէս և մահ խաչին, զոր կրեաց
անարգական,
Ըզչարչարանս մարմնոյն, զխոցումն
զեղարդական,
Աստուածութեանն ասա՛ վատահ
անխռովական։

Զի և Աստուած մարմին առ Բանքն
խառնիցման ,
Որպէս Աստուած , է ինքն և մարդ
համանգամայն .
Ոչ ոմն Աստուած՝ և ոմն մարդ
բաժանեալն .
Նոյնպէս և կիրք նորին և գործք
անօրինեալն ,
Աստուածայինք և մարդկայինք ,
որք միացան ։
Ոչ թէ օտար է՝ զի Բանէն
գործք մարմնական ,
Ոչ առանձին՝ և գաս են ազգք քն
աստուածական .
Այլ զմարդկայինն՝ աստուածային
լիր խոստովան ,
Եւ զաստուծոյն իսկ ՀՇմարիտ
ներմարդկական .
Մի զբարձրագոյն բանս ասելոյ զրոց
աստուածաբան ,

Զայն Աստուծոյ տացես միայն
իւր սեպհական ։
Եւ մի ընդդեմ նորին՝ գգրեալս
խոնարհական ,
Զայն մարդկութեան տեր լինել
յարմարական ։
Այլ մի և նոյն լինել Բանին
ընութեամբ մարդկան ,
Բարձրացուցիչ բանք՝ և գրեալք
նուաստական ։
Մի՛ ըզբնութիւն Բանին տացես
սրբեալական ,
Առ ի յիգուալ՝ կամ շրջութիւն
խառնական ։
Ո՛չ համազոյ տեսլ Բանին
զմարմին մարդկան ,
Ո՛չ ըստ բնական գոյացութեանցն
յատկական ։
Այլ ընդ բանիւ՝ միաւորեալ
անճառական ,

Որ առ մարմին իւր՝ յարգանքին
'ի կուսական ։
Բանքն յդացեալ՝ յարգանք կընոջն
ինամական ,
Ըստ օրինի որդւոց մարդկան
հաստատական ։
'Իսկ 'ի Կուսէ՝ առանց սերման՝
անապական ,
Որ յայտնապէս է զօրութիւն
աստուածական ։
Յորմէնի Կուսին մարմին առ
նիւթական ,
Բայց 'ի Հօրէ ոչ մեկնեցաւ
Աստուածն Բան ։
Մարմին հոգւով՝ միաւորեալ
միաք բանական ,
Զի ըստ որոմն՝ աստուածային
որդիք մարդկան ։
Նա Մայր միայն ունի յիրկնի
իւր ստեղծական ,

Զի մեք կալցուք՝ Հայր ի յերկինս
անեզական.
Նա կոչեցաւ Որդի մարդոյ
տընտեսական,
Զի մեք զԱստուած՝ Հայր կոչեցուք
մեզ շնորհական.
Թլպատեցաւ նա ութ օրեայ ըստ
ուխտին եղման,
Մեզ հոգևոր թլփատուն թիւն
տալ մաքրական.
Քառասնօրեայ եկն ի տաճարն
աւուրց լրման,
Ըստ օրինացքն Մովսէսի
որպէս գրեցան.
Պատարագօք ընծայեցաւ
Տեառն յանդիման,
Հօր ի ծարձուն՝ ընծայելով
գընուն թիւն մարդկան.
Ի Յեգիպտոս՝ Յովսէփ տանէր
փախստական,

Զկռապաշտութիւն առնել անսի
հալածական .
Մանուկն աճէր և զօրանայր ըստ
կարգի աճման ,
Զոր օրինակ՝ նիւթ ըզգալի
արեգական ,
Որ առ սակաւ սակաւ ծագէ
զլոյն իւրական .
Նոյնպէս և Բանն՝ ընդ հաստակին
իւր մարմնական ,
Զաստուածային փառացն փայլէր
զվերկական ։
Որ կերակրօք յանձն առ սընունդ
տըղայական ,
Նոյն պարգևեաց մեզ կերակուր
ըզհոգեկան ։
Զամս երեսուն ծածկեաց ըզփառան
աստուածական ,
Գայ մկրտիլ առ Յովհաննէս
Ի Յորդանան .

Ինքն քաղցեալ՝ և ժուժկալեաց
համբերական,
Զանժամ ճաշակն ըժշկեաց
զանժուժական.
Նոյն և փորձի՝ ի փորձողէն
անյաղթական,
Զի զՆախահայրն՝ յաղթող ցուցցէ
և զօրական։
Ինքն էր Աստուած՝ համայն և մարդ
ճշմարտական,
Որ ի քաղցնուլն՝ ուչ ճաշակէր
անժուժական,
Եւ ճաշակէր առանց քաղցի
իշխանական.
Զի կամաւոր՝ ցուցցէ զկիրն
և փրկական,
Թէպէտ քաղցեալ՝ որպէս զմարդ
կերակրական,
Բայց զքաղցուն՝ ժամանցուցեալ
Աստուածական,

Յերևելիսդ մի կացցես
գայթակղական ,
Այլ ամբարձցիս՝ յիմանալիս
գերունական ։
Վաստակեցաւ յուղի զընալովն
աշխատական ։
Այլ ի վերայ ծովու քայլէր
թեթևական .
Ծարաւեցաւ այն՝ որ ծովու
եզեալ սահման ,
Այլ ինքնակամ ետ մեզ զջուր
կենդանական ։
Գահաւիժեալ լինէր յազգէն
ի Հրէական ,
Բայց ի միջոյ նոցուն գնայր
յոգ վերնական .
Ընդեաց քնով՝ ըստ օրինի
որդւոց մարդկան ,
Այլ արթնութեամբ՝ սատակեալ
ալեացն տայ հրաման ։

Տգիտացաւ նման մարդոյ
անգիտական ,
Այլ առ յապայ տուօղ բնութեան
է գիտութեան .
Եւ որ ամեցաւ կրիւք բնութեան
Ադամական ,
Զի զորտմութիւն մեր դարձուցէ
յուրախական .
Այլ վերսին տաւ մեզ զԴրախտն
անմահական ,
Յոր Հոխանայր Ադամն հին
անդ փափկական ;
Ի սիրելոյն արտասուելով
առ գերեզման ,
Ասուածարար կոչեաց զմեռեալ
շորեքօրեայն .
Արտասուելովն՝ եցոյց առ մեզ
գութ սիրական ,
Զնչեաց զարտօրը յերեսաց
մեր ամենայն ;

Ապուակեցաւ ի ծառայէն ձեռաց
ս։ եղծման ,
Ծառայ առնել մեր զբանտարկուն
եւ մեզ հրաման .
Թուք ընկալաւ ի բերանոյ
պղծոց մարդկան .
Եւ փչեաց ի դէմս մեր զՀոգին
Աստուածական ։
Բևեռեցաւ ի յանիծ խց փայտն
մահուան ,
Գնելով զմեզ ի յանիծ խցն
օրինական .
Մեռաւ մարմնով՝ մահկանացու
բնութեամբ մարդկան ,
Մեռոյց ի մեզ մահն՝ մահուամբքն
անմահական .
Թաղեցաւ յերկրի մարմնովն
ի գերեզման,
Իսկ միութեամբ Բանին մնալով
անապական ։

Էջ ի գժոխս՝ մերոյ հոգւոյս
բանական,
Որ ընդ բանին էր միացեալ
ազատական։
Երեք քօրեայ՝ իսկ յարուցեալ ըստ
բանին խոստման,
Զ յարութեան տալով մեզ յոյս
անեպական։
Համբարձաւ առ Հայր ի փառսն
էր սեփհական,
Զ մեզ ընդ էր փառաւորել
անզուգական։
Նոյն հայրենի փառօք գալոց
է ի վախճան,
Ընտրեալ կենդանեաց և մեռելոց
ի դատաստան։
Ոմանք ի հուրն իսկ առաքին
անշէջական,
Եւ այլք ի փառս անպատում
անզբաւական։

Յայնժամ զքեզ իսկ պատուեսցէ
Սիրողդ զբան ,
Եւ զթուութեամբ իսկ հայեսցի
յանձնս անարժան.
Եւ որք սիրով՝ յայսմ բանիս
ինչ վարժեցան ,
Նոքա ի փառս՝ աջակողման
պայծառանան.
Զի ընդ Սրբոցն՝ արժանացեալք
գուսան լման ,
Երբարդութեանն տալ զփառս
միշտ անվախճան .
Ընդ որս և ես՝ փայտս անտառի
և գոսական,
Երգեմ զփառս Աստուածութեան
անլուսական .

ՎԵՐՋ